
ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԸ ՀԱՅՆՐԻՒ ՀԱՅՆԵՒ ՄԱՍԻՆ

ՆԱԶԵԼԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հայ գրականության մեջ առանձնակի նշանակություն ունի գրող, բանասեր, լրագրող և հասարակական գործիչ Արշակ Չոպանյանի (1872–1954) քննադատական և գիտական-բանասիրական գործունեությունը: Լինելով կուլտուր-պատմական դպրոցի սկզբունքների հետևորդ՝ նա նորովի է մեկնաբանել գրականություն երևույթը: Չոպանյանը ստեղծագործել է վաղ տարիներից, ինքնուրույն և թարգմանական գործերով աշխատակցել է «Արևելք», «Մասիս», «Հայրենիք», և այլ պարբերականների: Եղել է Փարիզում լույս տեսնող «Անահիտ» հանդեսի խմբագիր:

Բացի հայ գրականության մեծերի մասին գրած ուսումնասիրություններից, Ա. Չոպանյանը գրել է նաև հոդվածներ, էսսեներ արևմտաեվրոպական (Վ. Հյուգո, Օ. դը Բալզակ, Է. Զոլա, Հ. Իբսեն, Է. Վերհարն) ռուս (Ա. Պուշկին, Ն. Գոգոլ, Բ. Տուրգենև, Լ. Տոլստոյ) և շատ ուրիշ հեղինակների մասին: Այդ շարքում իր նշանակալի տեղն է զբաղեցնում մինչև այժմ շատ քչերին հայտնի «Հանրի Հայնե» ուսումնասիրությունը:

Հայ գրական մտքի ականավոր ներկայացուցիչները բազմիցս արտահայտել են իրենց վերաբերմունքը Հայնեի նկատմամբ: Գրական զանազան ուղղությունների և տարբեր աշխարհայացքի տեր մարդիկ այլ կերպ են ընկալել գերմանացի բանաստեղծին: Հայ մամուլում Հայնեի մասին եղած տպագիր նյութերի շարքում իր բացառիկ կարևոր դերն ու նշանակությունն ունի 1898 թ. «Մուրճ»-ում տպագրված Արշակ Չոպանյանի ուսումնասիրությունը, որը, ըստ էության, առաջին լուրջ քննադատական աշխատությունն է: Հայտնի գրականագետը հանգամանորեն անդրադարձել է Հ. Հայնեի բանաստեղծական ժառանգությանը: Վերոհիշյալ ուսումնասիրությունը գրվել է 1898 թ. Թիֆլիսում հրատարակված Հայնեի բանաստեղծությունների առանձին ժողովածուի՝ «Բանաստեղծություններ և քերթվածներ»-ի առիթով: Այդ թարգմանությունը կատարել է Ատոմ Շահենը՝ ֆրանսերենից և արձակ: Թարգմանության լեզուն արևմտահայերենն էր: Սակայն Հայնեի պոեզիան հայ ընթերցողին ծանոթացնելն ու այն առանձին գրքով հրատարակելն արդեն երևույթ էր մեր գրականության մեջ: Եվ այս անգամ Հայնեին հայ գրասեր հասարակությանը ներկայացնելը հանձն առավ տաղանդաշատ գրաքննադատ Արշակ Չոպանյանը: Հին և նոր գրական դեմքերը հայ հասարակությանը ներկայացնելու առումով Ա. Չոպանյանը նման է գրական «տափաստանների» հսկիչի՝ արծվի, որի սրատես հայացքից չի վրիպում ոչ մի մեծ կամ փոքր գրական երևույթ, շարժում: Նա գրում է. «Մեր ազգային դպրության համար Հայնեի ուսումնասիր-

¹ Ա. Չոպանյան. Հանրի Հայնե. – «Մուրճ», 1898, № 6, էջ 816:

րության և թարգմանության ունենալիք օգուտներու, որք մեծ են, տեսակետն է իմս, այս հոդվածիս մեջ, ուր մեզ գրեթե բոլորովին օտար հեղինակ մը համառոտիվ, բայց ըստ կարելիւոյն ամբողջությամբ կ'ուզեմ ծանոթացնել Հայ ընթերցողին»²:

Այսպէս, 1898 թ. առաջին անգամ «Մուրճի» 6-րդ համարում տպագրվում է նրա ընդարձակ ուսումնասիրությունը, որտեղ մանրամասն քննության է առնում Հայնե երևույթը: Դա ոչ միայն բանաստեղծին տված գնահատական էր, այլև մեր ազգային հոգեբանության, գեղարվեստական ըմբռնումների ձևավորման մեջ նրա խաղացած մեծ և բացառիկ դերի հաստատումը:

Դեռևս ոչ մի քննադատ թե՛ գերմանացի և թե՛ օտար, չի կարողացել տալ Հայնեի՝ որպէս պոետի և մարդու, այնպիսի դիպուկ բնութագիրը, որի մեջ պետք է ընդգրկվեր նրա «կազմության ամբողջ բազմանիստը», ինչպէս դա ասել է Չոպանյանը: Թերևս միայն բացառիկ դիտողականության տեր գրականագետը կարող էր, ըստ էության, գնահատել և ներկայացնել Հայնեին, և միայն այն դեպքում, երբ ունի տվյալ հեղինակին համագոր երևույթներն ընկալելու ու զգալու համապատասխան մակարդակ: Միայն այս հատկանիշներով օժտված մարդը կարող է իրեն իրավունք վերապահել բացահայտելու Հայնեի և նրա ստեղծագործական ժառանգության ողջ խորությունը: Այս պարագայում պարտադիր է հոգեկան ընկալունակության ներդաշնակությունը: Մեջբերում ենք Ա. Չոպանյանի ուսումնասիրության առաջաբանից մի հատված. «Օր մը, բնության մեկ հիմար քմահաճույքովը, հրեա զգայնությունը, հնդիկ խոկումը, հելլէն ներդաշնակությունը, գերման երազանքը և ֆրանսիական ծիծաղը իրարու խառնվեցան, և այդ արտակարգ ձուլումէն առաջ եկավ ամենէն զմայլելի հրեշքը, որ երևացած է մարդկային ընտանիքին մեջ: Հանրի Հայնե իրականացուց հին առասպելը Յնոք-Անասունին, որ առյուծի մարմին, կնկան զլուխ և վիշապի թևեր ունէր: Իր դեմքը, մտավորական պատմության մեջ, ամեն կարգէ ազատ, կորոշվի եզական կնճռոտությամբը, բազմապատիկ խնամություններով հյուսված, առանց ոնէ տան հետ ուղղակի կապ ունենալու: Տեսակ մը անհուն աղջկորդի, կյանքին մեկ խորհրդավոր քառուղիէն ծագած, և որ բոլոր դարերուն ու բոլոր ցեղերուն հոգին իր մեջ կըրցուցնէր»³: Ավելի դիպուկ և ճշմարտացի դեռ ոչ ոք չի գրել Հայնեի մասին: Եվ այս բնութագիրը միանգամայն ճիշտ է Հայնեի ստեղծագործությունների «դիպագոնը» ընկալելու համար. նախ պետք է ստույգ ըմբռնել, թե ով է հեղինակը: Հայնեն մի «դեմք» է, որ «որնէ տան հետ կապ չունի»: Հանգամանորէն անդրադառնալով Հայնեի ապրած դարաշրջանին, գրական նախասիրություններին և ուղղություններին, Չոպանյանը գրում է. «Հայնե այն բանաստեղծն է, որ ոչ մեկ դպրոց, ոչ մեկ վարպետ կը հիշեցնէ և որ հետևող չի կրնար ունենալ: Բազմազան ազդեցություններու խաչաձևումն այդ ծայրահեղորէն ջղուտ խառնվածքին մեջ՝ առաջ բերած է ուրվային ճարպկությամբ միտք մը, որ իրերն ու գաղափարները ցուցուցած է ամենէն անկայուն պրիսմային մեջէն: Միտք մըն է անընդհատ շարժման մեջ, միշտ անհանդարտ, բաց՝ ամեն գեղեցկության, ա-

² Նույն տեղում, էջ 817:

³ Նույն տեղում, էջ 816:

մեն քան իր ամեն երեսներովը ըմբռնելու կարող, ծիծաղելիին դեմ սպառնազեն, ատեցող ամեն պայմանադրության և ամեն բանաձևի, ինք իր մեջ գտնելով իր բացատրությունն և իր գույնը, լայնորեն ընտրողական և սակայն երբեք անհարիր, կնճռոտ բայց երբեք անբնական, ոչ մեկ կուռքի երկրպագու, ոչ մեկ օրենքի հնազանդ, ինքնավստահ և ապստամբ, միշտ դժգոհ, միշտ գալարված, ու հակառակ աներևույթ միմոսության մը՝ ահավորապես տխուր»⁴: Անվանի գրականագետը ավել-լացնում է, որ այս «ապշեցուցիչ խառնուրդը» կարող էր միայն այն ժամանակաշրջանում կազմվել, երբ հին աշխարհը հսկայական երկունքի մեջ էր՝ նոր աշխարհի ծնելու համար, երբ ֆրանսիական ազատ մղումներն ու գերմանական անդնդասույզ խոհանքը իրարու հետ կը մրցեին, «երբ աշխարհ՝ Հավաքական Ուժին պայթումեն և անհատական կամքին հաղթական կանգնումեն կրկնակի դրդոյած, դանդաղորտ ու սարսռազին, ճամփա մը կը փնտռեր»⁵:

Չոպանյանի այս ուսումնասիրությունը տպագրվում է երկու մասով: Առաջին մասում նա նկարագրում է ընդհանուր սոցիալ-քաղաքական իրադրությունը, այնուհետև՝ գրականության մեջ տիրող մթնոլորտը, որտեղ XIX դ. սկզբին հանդես եկավ Հայնեն: Գոթենն վեհափառ ծերության կատարին՝ հանդարտ ու ներդաշնակ լույս էր սփռում հորիզոնի մի ծայրից մյուսը: Վաղուց արդեն չկար Շիլլերը, քնած էր իր քնարերգության վեհ անտառի խորքում: Իր մուտքին Հայնեն նրանց առաջ խոնարհիվեց երկյուղածորեն՝ սքանչանալով մեկի դյուցազնական հոգով և պաշտելով մյուսի աստվածային հավասարակշռությունը: Մակայն նոր ժամանակի ճաշակը, ձգտումներն արդեն հեռու էին երկու բանաստեղծների շրջանի ոգուց: Այդ ընթացքում էր, որ սկսեց ձևավորվել գերմանական ռոմանտիկական դպրոցն: Հայնենն նս, հրապուրված այդ գունագեղ և երևակայական դպրոցով, հարեց դրան, սակայն երբեք մինչև վերջ չտրվեց նրանց: Նրան ավելի շատ գրավում էր Անգլիայի պոեզիայի երկնակամարի ամենավառ աստղը՝ Բայրոնը: Հայնեն իր խառնվածքին միանգամայն հարազատ գտավ նրան և ամբողջ կարողությամբ մղվեց դեպի նոր ձայնը:

Չոպանյանի ուսումնասիրության մեջ Բայրոնը ներկայանում է ինչպես խոշորացուցի տակ: Նրա սուր հայացքը թափանցում է բանաստեղծի «կազմության» անթափանցելի խորքերը, ըստ էության, բնութագրելով Բայրոն երևույթը. «... անոր մեջ, միջնադարյան երանգապնակը կ'ոգևորեր ջղային գալարումով մը, որ անձանոթ է գերմաններուն, մտածումը, դանդաղ խոկման մը մեջ թուլանալու տեղ, կը պրկվեր հոն, կցատքեր, կը ցցվեր մինչև երկինք, վիհերեն ի վեր կը գահավիժեր. արագ, հիմար, հիվանդ ուստումներ ուներ, վախկոտ սովորություններեն, ամոթխած պատշաճություններեն, հնավանդ ծանրաբարոյություններեն դուրս կ'ելլեր. ամբարիշտ ու կատաղի աղաղակներու կը հանդգներ, ամեն հարգանք կը նետեր, ամեն երկյուղ կը կոխտներ, ամեն ամոթ կ'արհամարհեր. կը կռվեր, կը բողոքեր, կը հայհոյեր, կը հեզներ ու կ'անիծեր: Անոր մեջ կար Վոլտերին քրքիջը՝ ավելի կծու դար-

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 824:

ձած, Գյոթեին հայեցողությունը՝ ավելի խանդոտ, նվազ պայծառ, այլապես թափանցական, և Շիլլերին վեհանձն մաքառումը՝ մոլեգնած, փրփրած, հուսահատության մոտիկ»։ Քննադատն այսպես է բնորոշել այդ ազդեցությունը. «Հայնեն ցնցվեցավ այդ մրրիկին շունչեն. անոր կապարագույն փայլակին լույսովը՝ ինքզինքը տեսավ, ինքզինքը ճանչցավ, և հասկցավ ինչ որ ուներ ըսելիք»⁶։

Չոպանյանը գրում է, թե Հայնեն, չնայած որ «շինված է գերման նյութեղեններով», փարիզցու միտք ունի։ Նա Վոլտերի երգիծանքը հասցրեց կատարելության, ստեղծեց և զարգացրեց հեզնանքը և երգիծանքի նոր, ավելի վտանգավոր ձևը՝ կատակը, *blague*՝ փարիզյան ձևով ասված։ «Blague-ը աննպատակ, հակասական, մշտափոփոխ և ծանծաղոտ ծաղրանքն է, որը կը կործանի կործանելու համար, որը ոչինչ կը հարգե՝ ոչ իսկ ինքզինքը, որ երբեմն քմահաճույքը կ'ունենա հուզմունքի փոխվելու և որ սպաննած ատենը գոհին վրա լալու կ'ելլե։ Հայնե վարպետը եղավ այդ նոր ծիծաղին, և իրմե ի վեր Պարիզ յուրացուց, ընդարձակեց և ամբողջ գրականության մը հոգին դարձուց զայն»⁷։

Չոպանյանն այնուհետև անդրադառնում է Հայնեի՝ Գերմանիայում գտած ընդունելությանը և քննադատությանը։ Նա կարծում է, որ գերմանացիները մինչև օրս աստում են Հայնեին՝ հակառակորդ երկրից իրենց հայրենիքը ծաղրելու համար։ Նա կարծում է, որ այդ վերաբերմունքն անիրավ է, քանի որ Հայնեն ծագումով հրեա էր և ոչ գերմանացի, ու ավելացնում. «Ցեղերի բաժանումները մարդկության մեջ ավելի իրական ու բնական են, քան հայրենիքներու սահմանավորումները։ Հայնե, գերման մը ըլլալով հանդերձ, հրեա մնացած է, հրեայի պես զգացված է և աստով, անջատ և անկախ նայվածքով մը կրցած է տեսնել բոլոր տգեղություններն ու թերություններն այն ժողովուրդին, որուն մեջ ծնված էր»⁸։ Չոպանյանն իրավացիորեն գրում է, որ Հայնեն, ճիշտ է, դաժանորեն էր ծաղրում իր հայրենակիցներին, սակայն դա ուղղված էր պրոսական ոգու, հայրենամուլ, զինամուլ, հնամուլ ֆիլիստերականության դեմ, նա երբեք չի դիպել գերմանական վեհաշուք հոգու գեղեցկությանը։

Ա. Չոպանյանն ըստ ամենայնի ճիշտ է ներկայացնում Հայնեին՝ գրելով. «Հայնե ծայրագույն սկեպտիկն է, բացարձակ անպատկառը. ոչ մեկ վախ, ոչ մեկ ամոթ, ոչ մեկ ինչ խղճատություն, ոչ մեկ ակնածանք ունի. վսեմ լիքտածն է։ Այս վերջնական տարաբախտության խմորը հրեա ցեղեն միայն կրնար ծնիլ»⁹։ Չափազանց հետաքրքիր են նաև գրաքննադատի հայացքները հրեաներին բնութագրելիս. «Հրեան միշտ ջղոտ և ծայրահեղ, որ հին օրերուն աստելությամբ ու ցասումով շինված հավատք մը ստեղծեց, այս դարուն կատաղի և բացարձակ անհավատության կրցավ հասնիլ։ Ժամանակակից ընկերության մեջ, հրեա ցեղը, զոր Նիցշե ինքն իսկ կը դավանի իբր ամենեն հզորն ու ճապուկը մարդկային ցեղերուն, միջնադար-

⁶ Նույն տեղում։

⁷ Ա. Չոպանյանի և Ն. Հայնեի մասին. – «Մուրճ», 1898, № 7, էջ 1055։

⁸ Նույն տեղում, էջ 1060։

⁹ Նույն տեղում։

յան հալածանքեն ավելի խտացած, ավելի ինքն իր մեջ սեղմված ու սրցած, առանց հայրենիքի, և ստեղծելով գաղափարական հայրենիք մը որ իր ցանցը ամբողջ աշխարհիս վրա կը տարածե, դարձավ տարր մը տարաբաղադրության և հեղափոխման. միշտ ծայրահեղ հրեան կ'երևա երկու երեսներով, որոնք արդի աշխարհին երկու բնեռներն են. մեկ կողմեն դրամի գորության մեծ տիրապետողն է, մյուս կողմեն ընկերական հավասարության, մարդկային ազատագրության մեծ գործիքն է. Ռոտշիլդն է և Կարլ Մարքսը. երկու երեսները, որոնք հակոտնյաներ են, իրար կլրացնեն և անգիտակցաբար նույն վախճանին կը ձգտին: ... Հայնե հրեա ցեղին արվեստագետ արտահայտությունը եղավ: Անոր լուծիչ ոգին ներկայացուց իր ծիծաղովը: Եվ ծիծաղը դառն էր, որովհետև ամբողջ հրեության կուտակված ոխը կը պարունակեր:

Իր ցեղն է դարձեալ, որ Հայնեի մեջ ձևացուցած է խառնուրդ մը Արևմտցիի և Արևելցիի, աստիճանով մը, գոր ոչ մեկ եվրոպացի բանաստեղծ ունեցած է»¹⁰:

Չոպանյանը, վերլուծելով և բնութագրելով Հայնե երևույթը, չափազանց խոր և պատկերավոր եզրահանգում է կատարում: Ունենալով գեղարվեստական ճոխ լեզու և երևույթները բացատրելու խորաթափանց միտք, Չոպանյանը ամբողջացնում է Հայնեին տված բնութագրերը և գնահատականը: Նա Հայնեին համարում է արևելցի հասկապես սիրո մեջ, կինը նրա համար ծաղիկ է անուշաբույր, անիմաստ, փշերով պատված և պետք է միայն հոտ քաշել զգուշությամբ, հարբել նրա բույրով՝ առանց ավելին ուզելու: Հայնեն ինքն էր խոստովանում իր արևելցի լինելը, նա գրում է. «Շիտակն ըսելով, ես գերմանացի չեմ, և կը փութամ ըսելու որ եթե գերմանացի ըլլայի՝ պիտի չպարծենայի աստով. բարբարոսներ են ասոնք. աշխարհիս վրա երեք քաղաքակիրթ ժողովուրդ կա միայն, ֆրանսիացիները, չինացիները և պարսիկները: Ես հպարտ եմ պարսիկ ըլլալուս...: Ա՛խ, ինչպես կարոտ կը քաշեմ Սպահանին»¹¹:

Չոպանյանի այս ուսումնասիրության յուրաքանչյուր էջ իր հերթին պարունակում է մի նոր բացահայտում, մի նոր ծալք, որ մինչև այդ աննկատելի է եղել: Հայնեի հակասական հանճարի էությունը նկարագրելիս Չոպանյանը ևս «վարակվել» է հանճարեղությամբ՝ իր բնութագրերի մեջ հասնելով գեղարվեստական ու գրաքննադատական մտքի կատարելության: Կրկին չենք կարող խուսափել ծավալուն մեջբերումներից, որպեսզի չխախտվի մեջբերվող գեղարվեստական մտքի ինքնատիպությունն ու գիտական դիտողականության ճշգրտությունը: Ահա ևս մեկ օրինակ նրա վերլուծությունից. «Եվ այն աստեն, բոլոր այս այլազան և հակընդդեմ տարրերով կազմված, Հայնեի գործը կը ներկայանա մեզ հրաշալի քալեյդոսկոպի մը պես, որ ամեն ակնթարթի, աննշմարելի շարժումով մը՝ նոր գույն կ'առնե ու նոր պատկերներ կը ձևացնե: Ո՞ր սահման, ո՞ր բանաձև պիտի կրնա այդ գործը որակել իր ամբողջությանը մեջ: Քննադատությունը անզօր է բացատրել և բնորոշել այդ հեղհեղով ստեղծագործությունը: Անի հակասական, փոփոխական և կենդանի է,

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ 1061:

տիեզերքի մը պես: Գերմանիո հեզնիչը ամենեն հիանալի լիդերն (երգեր) ու բալլադներ գրած է գերման բանաստեղծության: Ո՞վ Հայնենն ավելի հասկցած է գերման անտառը, հեքիաթներով, ոգիներով, աղջիկներով, բզզացող, ու լուսինկային արցունքներուն տակ արծաթ գոլորշիներով ծխաշունչ...»¹²:

Վերլուծելով «Վերադարձ» և «Նոր գարուն» շարքերի բանաստեղծությունները՝ տաղանդավոր գրաքննադատը հանգում է հետևյալ եզրակացության. Հայնեն սիրո ամենակատարյալ բանաստեղծն է: Նա սերը ներկայացրել է իր բոլոր դրսևորումներով, իր բոլոր ծալքերով ու խոռչերով և նույնիսկ իր ծաղրանկարով. «Ամեն ճշմարտակ հռետորներե, ամեն ուռուցիկ այլաբանութենե, ամեն կեղծապատիբ զարդարանքե և խաթարող խոռոբացումե հեռու, Հայնե ճշմարիտ իրապաշտի նայվածքով մը տեսած է սերը, իրական շրջանակին մեջ, իրական անձերովը, իրական զգացումներովը զայն նկարած է, և ամենեն բնական պարզությամբ ցուցուցած է զավեշտական ու ցավագին դռամբ, զզվելի կերպով հասարակ և անհունապես եղերական, որ հավիտենաբար կ'անցնի մարդուն ու կնոջ միջև»¹³:

Իր բազում բնութագրությունների մեջ Չոպանյանը միշտ իրավացի է և յուրաքանչյուր բնորոշման և գնահատականի մեջ մեզ համար անսպասելի բացվում է գերմանացի բանաստեղծի մի նոր հատկանիշ, խառնվածքի մի անհայտ դրսևորում, որ անասելի հետաքրքրական ու գրավիչ է: Մոտ 30 էջ կազմող ուսումնասիրության ավարտին տաղանդավոր գրաքննադատը հանգում է հետևյալ վերջնական եզրակացության. «Հայնե կրներկայացնե կանացի զգայնություն մը՝ իր ամենեն ծայրահեղ զարգացմանը հասած: Հայնե ունեցած է նրբազգացությունը, հանդգնությունը, ջղային տազնապները, արցունքի անզսպելի պայթումներն ու անամոթ քրքիջները, թունավոր չարություններն ու սերովբեական գորովները, և ամբողջ անդիմադրելի համարձակությունը շատ գեղեցիկ, շատ նուրբ, շատ զարգացած և քիչ մը հիվանդ կիներուն՝ որոնք ամեն բան կ'ըսեն, սպառնով իրենց շրթունքներուն աղվորությանը, ձայնին քաղցրությանը և ըսել գիտնալու արվեստին վրա...»

Անհուն, այլանդակ և հրաշալի պանթեոն մըն է այդ գործը, անճշմարտանման ու հրեշավոր տաճար մը, ուր բոլոր աստվածներն ու բոլոր ոգիները, բոլոր ծաղիկներն ու բոլոր աստղերը ներկա են և իրարու կը նայեն, իրարու չհավատալու ձևով մը, սաչած իրարու քով գտնվելե, իրենց իսկ իրականությանը վարանոտ: Նազովրեցիին դալկունակ դեմքին քով Բաքոսին ծաղկավետ գլուխը կը բարձրանա հոն. Հերովդիադային ոճրագործ ստվերին դիմակը և Աստղիկին հայրատ ժպիտին մոտիկ, Գույս-Մորը շուշան ստվերը կը ծածանի. արևելքին հրեղեն քերովբեներուն հետ, հյուսիսային գոլորշիական ոգիները կը թռչտին. և Բուդդային խաղաղ թախծությանը ընթերակաց, հաղթ ու խեղկատակ պատկերը կը ցցվի Փալլոսին: Դյուցազնական հոգիները, կուսական խառնվածքները պիտի միշտ վիրավորվին այս անբարիշտ ու կնճռոտ թանգարանեն. և Հայնե պիտի մնա բանաստեղծը անոնց, ո-

¹² Նույն տեղում, էջ 1063:

¹³ Նույն տեղում, էջ 1068:

րոնք գիտեն թե կյանքին բոլոր երեսները իրար կ'արժեն և թե ծիծաղը լացին մեկ ավելի դառն ձևն է»¹⁴:

Ա. Չոպանյանի երկրորդ գրաքննադատական հոդվածը տպագրվել է 1900 թ. «Բյուզանդիոնի» 4–8 համարներում¹⁵: Այն ևս գրված է Հայնեի՝ Ատոմ Շահենի ֆրանսերենից կատարած արձակ թարգմանության առիթով: Այս գրախոսականը գրված է լրագրի համար և ծավալն էլ հարմարեցված է լրագրի պահանջներին: Վերջինիս մեջ արդեն Չոպանյանը հանդես է գալիս ավելի քննական և գուսպ: Նա այս անգամ ևս ընդգծում է այդ գրքի կարևորությունը՝ գրելով. «Այնուհանդերձ, շատ օգտակար է իր գիրքը, մեր, հայ ընթերցողներու համար այ, ու փափագելի էր հետևաբար, որ լավ թարգմանություն մը կատարվեր: Բացի այդ՝ գերմաներեն տպագրութենեն պետք է ընել, որ ֆրանսիականեն շատ կատարյալ է ...»¹⁶: Սույն հոդվածը գրվել է բանաստեղծի ծննդյան 100-ամյակի առթիվ և Չոպանյանը, մեկ անգամ ևս ներկայացնելով Հայնեին, ավելացնում է, որ հարմար առիթ է խոսելու Հայնեի մասին, որի «կույր հիացող մը չեմ»: Սա նշանակում է, որ գրաքննադատն իր գնահատականների մեջ օբյեկտիվ է: «Բյուզանդիոնում» տպագրած գրախոսականում ևս Չոպանյանը հանգամանորեն քննության է առել Հայնեի ստեղծած ժառանգությունը՝ վերլուծելով այն փուլ առ փուլ: Այս գրախոսականը գրված է եղել Վիեննայում և ստորագրված է Շ. Ա. Վոսալ:

Ա. Չոպանյանը, փաստորեն, առաջինն էր, որ լիաձայն խոսեց Հ. Հայնեի գրական ժառանգության հասարակական ու գեղարվեստական նշանակության մասին: Ի դեմս Արշակ Չոպանյանի՝ հայ գրաքննադատական միտքը ունեցավ իր բացառիկ հանճարը: Յավոք, այսօր շատ քչերն են տեղյակ այդ ուսումնասիրության մասին, չենք խոսում արդեն գերմանացի հայնեզետների և առհասարակ գրականագետների մասին, որոնք, սակայն, եթե ծանոթանային Ա. Չոպանյանի «Հանրի Հայնե» ուսումնասիրությանը, շատ բարձր պիտի գնահատեին այն: Համոզված ենք, որ շատ ազգեր պիտի երազեին Չոպանյանի նման հզոր վերլուծական մտքի տեր գրաքննադատ ունենալու համար:

АРШАК ЧОПАНЯН О ГЕНРИХЕ ГЕЙНЕ

НАЗЕЛИ МАРГАРЯН

Резюме

В армянской литературе особое место занимает научно-филологическая и критическая деятельность видного писателя, публициста и общественного деятеля Аршака Чопаняна (1872–1954). А. Чопанян сотрудничал с журналами “Аревелк”, “Масис”, “Родина”. Был редактором выходившего в Париже

¹⁴ Նույն տեղում, էջ 1068–1069:

¹⁵ «Բյուզանդիոն», 1900, № 4:

¹⁶ «Բյուզանդիոն», 1900, № 5:

журнала “Анаит”. Кроме исследований о великих деятелях армянской литературы А. Чопанян писал статьи, эссе также о западноевропейских (В. Гюго, О. Бальзак, Э. Золя, Г. Ибсен, Э. Верхарн) и русских (А. Пушкин, Н. Гоголь, И. Тургенев, Л. Толстой) писателях. Особое место занимает до сих пор малоизвестное исследование А. Чопаняна „Генрих Гейне“ в жанре эссе-портрета.

ARSHAK CHOPANYAN ABOUT HEINRICH HEINE

NAZELI MARGARYAN

S u m m a r y

The critical and scientific-philological activities of the prominent writer, publicist, journalist and public figure Arshak Chopanyan (1872–1954) has a significant place in Armenian literature. A. Chopanyan wrote and translated for the periodicals “Arevik”, “Masis,” “Hairenik.” He worked as the editor of the journal “Anahit” being published in Paris. Together with publications about the great Armenian writers A. Chopanyan also wrote articles, essays about West-European (V. Hugo, O. Balzac, E. Zolya, H. Ibsen, E. Verharn) and Russian (A. Pushkin, N. Gogol, I. Turgenev, L. Tolstoi) writers. Among these articles there is one (not so well-known) devoted to Heinrich Heine, written in essay-portrait genre.